

Առնուլդ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի
դատավորի ավագ օգնական,

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության
և կրիմինալիստիկայի ամբիոնի սասյիրանոս

**ՄԻՆՉԳԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏԱՄԲ ԳՐԱՎՈՐ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ**

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումներն ուղղված են նաև առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման հիմնախնդրի հանգուցալուծմանը: Այդ կապակցությամբ վերջին ժամանակաշրջանում իրականացված առաջնային քայլերից էր Երևան քաղաքում մեկ միասնական ընդդատություն ունեցող Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ձևավորումը, որի արդյունքում գերծանրաբեռնված դարձնող աշխատանքը հավասարաչափ բաշխվելու է դատավորների միջև:

Նման պայմաններում համեմատաբար միջին մակարդակի աշխատանքային ծանրաբեռնվածություն ունեցող դատավորի կողմից կատարման ենթակա աշխատանքն ավելանալու է: Ընդ որում՝ վերջինս առավել արտահայտված է լինելու մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողություն իրականացնող դատավորների դեպքում, որպիսիք նոր դատական օրենսգրքի համաձայն լինելու են բացառապես քրեական գործեր քննելու իրավասություն ունեցողներն ի տարբերություն գործող կարգավորումների, երբ այն իրականացնում են նաև քաղաքացիական գործեր քննող դատավորները: Այսինքն՝ պատկերավոր ներկայացնելու դեպքում ստացվում է, որ ներկայումս Երևան քաղաքում 66 դատավորների

կողմից տարվա կտրվածքով միջինում քննության առնվող 9.000-10.000 միջնորդությունները նոր դատական օրենսգրքի պայմաններում քննվելու են ընդամենը 25 դատավորների կողմից¹: Թեև նախնական դատական վերահսկողության իրականացումը բացառապես քրեական գործեր քննելու իրավասություն ունեցող դատավորներին վերապահելու մտեցման իրավաչափությունն անվիճելի է, սակայն անվիճելի է նաև քրեական գործեր քննող դատավորների կողմից կատարման ենթակա աշխատանքի ծավալների ավելացման փաստը: Նման պայմաններում անհրաժեշտություն է առաջանալու փոփոխել դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ նվազեցնելու այլընտրանքային ուղիներ, առավելապես՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտում:

Ելնելով այդ հանգամանքից՝ սույն աշխատանքի շրջանակներում փորձել ենք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտը, բացառությամբ առանձին դեպքերի, գրավոր ընթացակարգով կազմակերպելու հնարավորությունը դիտարկել որպես դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման այլընտրանքային եղանակ:

Ինքնին գրավոր ընթացակարգը որպես դատավարության կազմակերպման ձև, Հայաստանի Հանրապետությունում ներկայումս կիրառվում է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից: Այս-

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2018 5 - 6 (227-228)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



պես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գործերը սահմանադրական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը սահմանադրական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը: 2012 թվականի փետրվարի 10-ին թիվ ՄԴԱՌ-5 որոշմամբ ընդունված Սահմանադրական դատարանի կանոնակարգի 63-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր ընթացակարգի դեպքում զեկուցող դատավորի կողմից գործի զեկուցումն ավարտելուց հետո անցում է կատարվում ընթացակարգային բնույթի հարցերի քննարկմանը՝ Սահմանադրական դատարանի դատավորի կողմից համապատասխան միջնորդության ներկայացման դեպքում, որից հետո դատարանը հեռանում է դռնփակ խորհրդակցության՝ որոշում կայացնելու համար: Այսինքն՝ դատավարության ընթացքում կողմերը հանդես չեն գալիս բացատրություններով, ինչը գրավոր ընթացակարգին բնորոշ հիմնական հատկանիշն է:

Գրավոր ընթացակարգը՝ որպես դատավարության կազմակերպման ձև, կիրառելու հնարավորությունն օրենսդրի կողմից Հայաստանի Հանրապետությունում վերապահված է նաև ՀՀ վճռաբեկ դատարանին: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածը բողոք բերած անձանց համար սահմանում է դատական նիստին ներկա գտնվելու իրավունք՝ առանց բացատրություններ տալու իրավունքի, որից որպես բացառություն նախատեսված է, որ դատավարության մասնակիցները կարող են կանչվել Վճռաբեկ դատարանի նախաձեռնությամբ բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանում օրենսդիրն ամրագրել է գրավոր ընթացակարգով բողոքների քննության կարգ, որից

անհրաժեշտության դեպքում կարող է անցում կատարվել բանավոր ընթացակարգի: Սակայն, գործնականում Վճռաբեկ դատարանում բողոքների քննությունը մշտապես տեղի է ունենում բանավոր ընթացակարգով՝ հաշվի առնելով, որ՝ ա) պրակտիկայում դատական նիստի տեղի և ժամի մասին ծանուցվում է ոչ միայն բողոք բերած անձը (դատական նիստին ներկա գտնվելու իր իրավունքն իրացնելու համար), այլ նաև դատավարության մյուս բոլոր մասնակիցները, բ) պրակտիկայում դատական նիստին ներկայացած դատավարության ցանկացած մասնակից հրավիրվում է հանդես գալ բացառությամբ՝ իր դիրքորոշումը հայտնելով ներկայացված բողոքի վերաբերյալ: Հետևաբար՝ գրավոր ընթացակարգին բնորոշ հատկանիշն ապահովված չի լինում:

Վերոգրյալի հետ մեկտեղ պետք է փաստել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում պարունակվում են գրավոր ընթացակարգով դատավարության կազմակերպման նաև այլ դեպքեր, ինչպես օրինակ՝ գործը դատական քննության նախապատրաստելիս 15-օրյա ժամկետում կողմերի ներկայացրած միջնորդությունները գրավոր ընթացակարգով քննության առնելը: Բացի այդ՝ թեև քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի համաձայն՝ դատական ակտերի կատարման փուլում ծագող հարցերը լուծվում են բանավոր ընթացակարգով, սակայն իրավակիրառ պրակտիկայի ուժով դրանցից որոշները լուծվում են գրավոր ընթացակարգով, ինչպես օրինակ՝ դատավճիռ կամ այլ դատական ակտ կայացնելիս թույլ տրված անհստակությունների (վրիպակների) ուղղումը: Այսինքն՝ նշված դեպքերում բանավոր դատաքննություն տեղի չի ունենում, ավելին՝ մույմիսկ դատական նիստ տեղի չի ունենում, ինչպիսի պայմաններում դատավարությունն անցկացվում է գրավոր ընթացակարգի կիրառման դասական եղանակով:

Դատական նիստի չանցկացման ար-

դյունքում սահմանափակվում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ «արդար դատաքննության իրավունքի» բաղադրիչը կազմող՝ «հրապարակային լուսման» իրավունքը, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն բացարձակ իրավունք չի համարվում: Մասնավորապես՝ այդ իրավունքը ենթակա է սահմանափակման այնպիսի բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք արդարացնում են այդպիսի լուսման չանցկացնելը²: Ընդ որում՝ ինքնին հանգամանքների բացառիկ բնույթը, որոնցով կարող է արդարացվել բանավոր լուսման չանցկացնելը, պայմանավորված պետք է լինի իրավասու ազգային դատարանի կողմից որոշվելիք հարցերի բնույթով³:

Որպես հիմնական չափանիշ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ լուսման անցկացում կարող է չպահանջվել, եթե առկա չեն արժանահավատության որոշման այնպիսի հարցեր կամ վիճարկվող փաստեր, որոնցով կպահանջվի լուսման անցկացում, և դատարանները կարող են կողմերի փաստարկների և այլ գրավոր նյութերի հիման վրա արդարացիորեն ու ողջամտորեն որոշում կայացնել գործի վերաբերյալ⁴: Այսպես օրինակ՝ լուսման անցկացնելուց ձեռնպահ մնալը կարող է արդարացվել, երբ բարձրացվում են միայն սահմանափակ բնույթի իրավական հարցեր⁵ կամ որոնք առանձնակի բարդություն չեն ներկայացնում⁶:

Այսինքն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունելի է համարվում անձի՝ «հրապարակային լուսման» իրավունքի սահմանափակումն այն դեպքերում, երբ դատարանը հանդես չի գալիս որպես ապացույցները բովանդակային գնահատման ենթարկող, փաստական հանգամանքների կապակցությամբ ծագած վեճը լուծող մարմին,

այլ գրավոր նյութերի հիման վրա որոշում է առանձնակի բարդություն չներկայացնող, սահմանափակ բնույթի իրավական հարցեր:

Միևնույն ժամանակ, «հրապարակային լուսման» անցկացումն անհրաժեշտ է այն բոլոր դեպքերում, երբ պետք է ստանալ դիմումատուների անձնական պատկերացումները նրա բացառիկ իմացության ոլորտում գտնվող հարցերի պարզման վերաբերյալ⁷, օրինակ, երբ դիմումատուին պետք է լսել՝ նրա տառապանքի աստիճանը գնահատելով համապատասխան նյութական փոխհատուցում տրամադրելու համար⁸:

Բացի այդ՝ հրապարակային լուսման անցկացումը պարտադիր է նաև այն դեպքերում, երբ ապացույցների գնահատման հիման վրա լուծվում է անձի մեղավորության հարցը⁹: Հակառակ պարագայում անհնարին կդառնա արդար դատաքննության իրավունքի մյուս բաղադրիչներից օգտվելու հնարավորությունը, ինչպես օրինակ՝ իր դեմ ցուցմունք տվող վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքը¹⁰: Սակայն ոչ բոլոր դեպքերում է պարտադիր հրապարակային լուսման անցկացումը, մասնավորապես, երբ անձին մեղաազարկում է ոչ էական իրավախախտում, ապա մեղքի ընդունման և վկաների չհարցաքննման պարագայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունելի է համարում գրավոր ընթացակարգի կիրառումը¹¹:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ պետք է արձանագրել, որ ինքնին հրապարակային դատաքննության անցկացումն անձի արդար դատաքննության իրավունքի հիմնարար երաշխիքներից մեկն է: Սակայն անհրաժեշտ է նաև փաստել, որ այն չպետք է լինի ինքնանպատակ և զուտ ձևական նկատառումներից ելնելով համարվի պարտադիր այն դեպքում, երբ դատական նիստ անցկացնելու անհրաժեշտությունն առհասարակ բացակայում



է: Հակառակ պարագայում ոչ միայն ան-նպատակային են օգտագործվում արդարադատության պատշաճ իրականացմանն ուղղված մարդկային և նյութական ռեսուրսները, այլ նաև այդ ռեսուրսների վատնմանը զուգահեռ խախտվում է նույն արդար դատաքննության իրավունքի մեկ այլ բաղադրիչը՝ ողջամիտ ժամկետներում իր գործի քննության անձի իրավունքը: Հետևաբար՝ քրեադատավարական մի շարք հարցերի լուծման համար ձևական բնույթ կրող դատական նիստի անցկացման գաղափարից հրաժարումը համապատասխան իրավական երաշխիքների նախատեսմամբ կարող է բարձրացնել մարդկային և նյութական ռեսուրսների ծախսման արդյունավետությունը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել արդարադատության որակի բարձրացմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գրավոր ընթացակարգի կիրառման հնարավորությունն առավելապես պայմանավորում է քննարկվող գործի բնույթով, որի հետ մեկտեղ մեր համոզմամբ պետք է հաշվի առնել նաև դատավարության ձևը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության ձևն արտահայտվում է կողմերի մրցակցության մեջ, որն անմիջականորեն փոխկապակցված է հրապարակային դատավարություն անցկացնելու անհրաժեշտության հետ: Հրապարակային դատավարություն անցկացնելու պահանջի ներքո դատավարության կողմերի միջև մրցակցության ծավալման, այդ թվում՝ խաչաձև հարցաքննության, հակընդդեմ հարցման, տրվող հարցերի և հանպատրաստի պատասխանների ստացման միջոցով, արդարադատությունը ոչ միայն իրականացվում է, այլ նաև տեսանելի և համոզիչ է դառնում: Այդ համատեքստում հրապարակային լուսման իրավունքը մրցակցության սկզբունքի բովանդակության ներքո հնարավորություն է տալիս վիճարկելու դատավարության ընթացքում մյուս կողմի ներկայացրած ապացույցները¹²: Այսինքն, լուսման անցկացնելու համար

բանավոր ընթացակարգի կիրառումը մրցակցության սկզբունքի կենսագործման նախապայմանն է:

Սակայն, մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության դեպքում, երբ նախաքննական մարմնի միջնորդությունները քննության են առնվում միայն քննիչի մասնակցությամբ, սպա մրցակցության սկզբունքի կիրառման հնարավորությունն առհասարակ բացառվում է այդ միջնորդություններին առարկություն ներկայացնող սուբյեկտի բացակայության պատճառով: Մասնավորապես, նախնական դատական վերահսկողության օբյեկտների սովոր գանգվածը կազմում են՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման, հեռախոսային խոսակցությունների վերծանման, խուզարկության, բանկային, նոտարական կամ ապահովագրական գաղտնիքի առգրավման, բջջային հեռախոսի զննման թույլտվություն ստանալու, ինչպես նաև հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կիրառելու նախաքննական մարմնի միջնորդությունները, որոնց քննությունն իրականացվում է բացառապես քրեական վարույթն իրականացնող քննիչի մասնակցությամբ (բացառությամբ հետախուզվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ քննարկվող կալանավորման միջնորդությունների):

Նշված միջնորդությունների դատական քննությունն իրավակիրառ պրակտիկայում կազմված է հետևյալ գործընթացից. դռնփակ դատական նիստը բացելուց, ինքնաբացարկի և բացարկի հարցերը լուծելուց հետո քննիչը հրապարակում է ներկայացված միջնորդությունը, որից հետո դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ, այնուհետև՝ վերադառնում և հրապարակում կայացված որոշումը: Այդ գործընթացը միջինը տևում է 20-30 րոպե:

Այսինքն, նշված միջնորդությունների քննության համար դատական նիստերի

անցկացումը կրում է ձևական բնույթ և այդպիսի միջնորդությունների բազմաթվության պայմաններում արհեստակարգորեն հանգեցնում է դատավորի աշխատանքի ծանրաբեռնման: Ընդ որում, նույնը վերաբերում է նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման վերաբերյալ միջնորդություններին, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նույնպես քննարկվում են դատական նիստում:

Ուստի պետք է փաստել, որ վերը քվարկված միջնորդությունների քննության գրավոր ընթացակարգի կիրառումը կարող է բարձրացնել դատավորի աշխատանքի արդյունավետության մակարդակը: Հենց այդ նպատակով էլ Վրաստանի՝ 2009 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ նախնական դատական վերահսկողություն պահանջող բոլոր քննչական գործողությունների կատարման նախաքննական մարմնի միջնորդությունները քննության են առնվում գրավոր ընթացակարգով միջնորդությունը ներկայացնելու պահից 24 ժամվա ընթացքում: Բացի այդ՝ նույն կերպ գրավոր ընթացակարգով են քննարկվում նաև պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման և գույքի վրա կալանք դնելու դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման նախաքննական մարմնի միջնորդությունները: Մինչդեռ տական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության բանավոր ընթացակարգի բացակայության մասին են վկայում նաև Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ, 213-րդ հոդվածների, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 89-րդ, 91-րդ, 126.4-րդ և այլ հոդվածների կարգավորումները:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ ազատությունից զրկելու հետ կապված (քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվող

մեղադրյալի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կիրառելու, փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու) դատավարական հարկադրանքի միջոցների դատական քննությունը բոլոր դեպքերում պետք է կազմակերպվի բանավոր ընթացակարգով: Վերջինս պատճառն այն է, որ այդ դեպքերում անհրաժեշտ է երաշխավորել անձի՝ դատարանի առջև կանգնելու և իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքը՝ այդ կերպ ապահովելով միջազգային ճանաչում ստացած Հաբեաս կորպուս ակտի ուժով ազատությունից զրկվելու օրինականության նկատմամբ դատարանի կողմից պատշաճ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը¹³, ինչպես նաև իրավապահ մարմինների կողմից անձին ազատությունից զրկելիս վատ վերաբերմունքի կամ հնարավոր չարաշահումների դրսևորման կանխումը¹⁴: Ընդ որում՝ այդ հանգամանքներից ելնելով բանավոր ընթացակարգի կիրառումը պարտադիր է նաև ձեռքբերված օրինականության նկատմամբ (կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննությունից առանձին) հետագա դատական վերահսկողություն իրականացնելիս:

Վերոնշյալի համատեքստում պետք է նկատել, որ նույն Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝ փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու նախաքննական մարմնի միջնորդության քննությունը ևս տեղի է ունենում գրավոր ընթացակարգով, մինչդեռ մեր համոզմամբ այդպիսի մոտեցումն իրավաչափ չէ և վտանգում է վերոնշյալ երաշխիքները:

Անդրադառնալով մինչդեռ տական վարույթի նկատմամբ հետագա (post factum) դատական վերահսկողությանը՝ պետք է նշել, որ այդ ռեժիմով անցկացվող դատական քննության ընթացքում մրցակ-



ցության սկզբունքի դրսևորման վերաբերյալ տեսական գրականության մեջ ձևավորված մոտեցումները միանշանակ չեն: Մասնավորապես, տեսաբանների մի մասը, ովքեր ընդունում են մրցակցության սկզբունքի կենսագործման հնարավորությունը՝ փաստարկում են, որ օրենսդրական կարգավորումներում բացակայում է նշում, որ մրցակցության սկզբունքը սահմանափակված է միայն քրեական գործի դատական քննության սահմաններով¹⁵, մրցակցությունը դրսևորվում է դատավարության մյուս կողմի փաստարկներին հակադարձելու, հիմնավորումներ ներկայացնելու միջոցով¹⁶: Տեսաբանների մյուս մասը, ովքեր այնքան էլ չեն համաձայնում դատական վերահսկողության ընթացքում մրցակցության սկզբունքի դրսևորմանը՝ ուղղակի մատնանշում են, որ մրցակցության սկզբունքն արտահայտվում է միայն ըստ էության գործի դատական քննության ընթացքում¹⁷ հաշվի առնելով, որ մրցակցությունը հանդես է գալիս որպես կողմերի միջև դատական վեճի հանգուցալուծման միջոց՝ ապացույցների ձեռքբերման կամ արդեն ձեռք բերված ապացույցների գնահատման միջոցով¹⁸, որի ընթացքում մեղադրանքի և պաշտպանության ֆունկցիաները տարանջատված են ինչպես դատական իշխանությունից, այնպես էլ միմյանցից և հանդես են գալիս դատավարության կողմերի ձևով¹⁹:

Ներկայացված դիրքորոշումների հաշվառմամբ մենք առավել հակված ենք այն մոտեցման, որ գործող քրեադատավարական մոդելի պայմաններում մինչդառառական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության ընթացքում մրցակցության սկզբունքը, եթե նույնիսկ դրսևորվում է, ապա սահմանափակ ձևով:

Մասնավորապես՝ կարծում ենք, որ հետագա դատական վերահսկողության ընթացքում մրցակցության սկզբունքի լիարժեք կենսագործման հնարավորությունը բացակայում է առնվազն հետևյալ եր-

կու պատճառով.

- մինչդառառական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության ընթացքում մրցակցության կենսագործման համար «ex officio» բացակայում են մեղադրանքի և պաշտպանության դատավարության կողմերը, առկա են միայն իրենց դատավարական շահը դատարանում ներկայացնող դատավարության մասնակիցներ, ովքեր միևնույն դատավարական շահի պաշտպանության նպատակ հետապնդելու պայմաններում նույն հարցի վերաբերյալ հաճախ նույնիսկ ունենում են միմյանցից տարբերվող դիրքորոշում,
- ինքնին մրցակցությունը պետք է արտահայտվի դատավարության մասնակիցների միջև միմյանց հետ «վիճելու», մեկի ինքնավար գործողություններով դատավարության մյուս մասնակցի հնարավորություններն արդյունավետորեն սահմանափակելու և դատական վիճաբանության արդյունքում կայացվող որոշման վրա ներգործելու միջոցով²⁰: Մինչդեռ հետագա դատական վերահսկողության դեպքում հակադիր շահեր ունեցող դատավարության մասնակիցները ոչ թե «վիճում են» միմյանց հետ դատարանի առջև, այլ նրանցից մասնավոր շահը ներկայացնող մասնակիցը քրեական հետապնդման մարմինների կայացված որոշումների իրավաչափությունը վիճարկում է իր դժգոհությունը միակողմանիորեն դատարանին հասցեագրելու միջոցով, որի քննության ընթացքում նա դատավարության մյուս մասնակիցներին հարցեր տալու իրավունք չունի:

Ընդ որում՝ բողոքի ձևով արտահայտվող այդ դժգոհությունը չի կարող ներառել նախաքննական մարմնի կողմից ձեռքբերված ապացույցների վերաբերելիու-

քյանը, բույլատրելիությունը կամ արժանահավատությանը վերաբերող հիմնավորումներ: Մասնավորապես՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը պետք է ներառի հիմնավորումներ այն մասին, թե ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության ո՞ր պահանջն է խախտվել և ինչպե՞ս է այն դրսևորվել, բ) վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումները ձեռք բերված ո՞ր նյութերին չեն համապատասխանում, գ) լրացուցիչ ինչպիսի՞ նյութեր ձեռք չեն բերվել վարույթն իրականացնող մարմնի կողմից, դ) անձի ո՞ր իրավունքը կամ ազատությունն է խախտվել²¹:

Իսկ քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներին, ինչպես նաև հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ որոշումների և գործողությունների դեմ բողոքը պետք է ներառի հիմնավորումներ այն մասին, թե ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության ո՞ր պահանջն է խախտվել և ինչու՞մ է այն դրսևորվել, բ) որս հետևանքով անձի ո՞ր իրավունքը կամ ազատությունն է խախտվել²²:

Նման պայմաններում մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն առավելապես հանդես է գալիս որպես գործի ելքի հարաբերակցությունն իրավունքի խախտման վաստի հետ գնահատող մարմին: Այսինքն՝ դատարանի կողմից մինչդատական վարույթի ընթացքին միջամտելու հնարավորություններն էականորեն սահմանափակված են և կրում են մակերեսային բնույթ, դատարանը չի «հրապարակում» նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված ողջ նյութերը, չի որոշում ապա-

ցույցների բույլատրելիությունը, վերաբերելիությունը և արժանահավատությունը, չի լուծում այդ նյութերում պարունակվող փաստական հանգամանքների իրավաչափության վեճը, այլ այդ նյութերը հիմք ընդունելով որպես այդպիսին պարզում է, թե ո՞ր ուղղությամբ է թերացել վարույթն իրականացնող մարմինը քննություն կատարելիս և արդյո՞ք բույլ է տվել դիմողի իրավունքների և ազատությունների խախտումներ:

Իրավակիրառ պրակտիկայում մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողություն իրականացնելու ողջ գործընթացը տևում է ամիսներ, նույնիսկ տարիներ, որը պայմանավորված է լինում մի կողմից՝ դատարանների աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, մյուս կողմից դատավարության մասնակիցների կողմից դատական միստերին չներկայանալով²³: Արդյունքում հաճախ են հանդիպում այնպիսի իրավիճակներ, երբ դատարանները շարունակում են քննել բողոքը, նույնիսկ որոշում են կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին այն դեպքում, երբ այդ պահի դրությամբ մինչդատական վարույթն արդեն ավարտված է լինում, իսկ վարույթն իրականացնող մարմինն էլ փոխված:

Մինչդեռ այդ բողոքների քննության գործընթացն ընդհանուր առմամբ ներառում է դիմողի կողմից իր բողոքի հրապարակումը, որի դեմ քննիչն ու դատախազը առարկում են և հայտարարում, որ պնդում են իրենց կողմից արդեն իսկ կայացված որոշումները:

Վերոնշյալ պատճառաբանությունների հիման վրա և հաշվի առնելով, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողություն իրականացնելիս դատավարության մասնակիցների գրավոր փաստարկների և այլ նյութերի հիման վրա ողջամտորեն հնարավոր է կայացնել արդարացի որո-

USPHU - ՀՈՒՆԻՍ 2018 5 - 6 (227-228)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



շում, գտնում ենք, որ դատավարության մասնակիցների կողմից ներկայացված բողոքները կարող են քննության առնվել ոչ թե բանավոր, այլ գրավոր ընթացակարգով: Այդ պայմաններում նույնիսկ սահմանափակ ձևով արտահայտվող մրցակցությունը չի կարող խաթարվել: Նշված մոտեցումն արտասահմանյան երկրներից ամրագրված է Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածում:

Ընդ որում՝ գրավոր ընթացակարգի կիրառման դեպքում բողոք բերած անձի համար պետք է երաշխավորված լինի ներկայացված բողոքի վերաբերյալ ողջամիտ ժամկետում դատական ակտ ստանալու հնարավորությունը: Այսպես, ներկայումս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի ձևակերպումն այն մասին, որ «բողոքը (...) քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում», իրատեսական չէ և որպես կանոն չի պահպանվում, քանի որ մինչ դատավարության մասնակիցները, շահագրգիռ անձինք ստանում են դատարանի կողմից ուղարկված ծանուցագրերը, ներկայացված բողոքի և կից նյութերի պատճենները, որից հետո քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան են ներկայացվում բողոքի քննարկման համար անհրաժեշտ նյութերը, ապա արդեն իսկ անցած է լինում այդ տասնօրյա ժամկետը՝ չհաշված դատական ակտի կազմման համար ողջամտորեն անհրաժեշտ ժամանակահատվածը:

Ուստի հնարավորինս կարճ ժամկետներում բողոքի վերաբերյալ դատական ակտ ստանալու համար պետք է սահմանել, որ բողոքը դատարան ներկայացնելիս դիմողը բողոքի պատճենը պետք է ուղարկի դատավարության մյուս մասնակիցներին, ինչպես նաև շահագրգիռ անձանց, ովքեր բողոքը ստանալու պահից 10-օրյա ժամկետում իրավունք ունեն ներկայացնել բողոքի պատասխան,

իսկ վարույթն իրականացնող մարմինն էլ այդ նույն ժամկետում պետք է դատարան ուղարկի բողոքի քննության համար անհրաժեշտ նյութերը: Ընդ որում՝ բողոքի պատասխանի պատճենը պետք է ենթակա լինի ուղարկման նաև դատավարության մյուս մասնակիցներին, որոնց համար պետք է նախատեսված լինի պատասխանը ստանալու պահից 5-օրյա ժամկետում գրավոր ռեպլիկ ներկայացնելու իրավունքը՝ այդ կերպ նաև երաշխավորելով սահմանափակ բնույթ կրող մրցակցության սկզբունքի դրսևորման հնարավորությունը:

Վարույթ իրականացնող մարմնից նյութերը ստանալու պահից դատարանը պետք է՝ ա) 15-օրյա ժամկետում որոշում կայացնի, եթե բողոքարկվում է համապատասխան մարմնի գործողությունը կամ անգործությունը, բ) 1-ամսյա ժամկետում որոշում կայացնի, եթե բողոքարկվում է համապատասխան մարմնի կայացված որոշումը, որը հաշվի առնելով գործի մեծածավալությունը, բարդությունը, ենթադրաբար խախտված իրավունքի բնույթը կարող է դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա երկարացվել ոչ ավելի, քան ևս 1 ամիս ժամկետով: Այսինքն, դիմողի համար պետք է երաշխավորված լինի ողջամտորեն կանխատեսելի և սեղմ ժամանակահատվածում իր կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ պատճառաբանված դատական ակտ ստանալու հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, բողոք բերած անձի համար պետք է երաշխավորված լինի բողոքի քննության գրավոր ընթացակարգից բանավոր ընթացակարգին անցում կատարելու վերաբերյալ հիմնավորված միջնորդություն ներկայացնելու իրավունքը, որը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ դատարանը պետք է պատճառաբանված որոշում կայացնի և այդ մասին հնարավորինս սեղմ ժամկետում տեղյակ պահի նրան: Ընդ որում՝ այդպիսի միջնորդությունը դատարանը պետք է բովանդակալից առումով քննար-

կի և համապատասխան որոշում կայացնի՝ հաշվի առնելով խախտված իրավունքի բնույթը, բացատրություններով հանդես գալու ցանկություն հայտնող անձանց բանակական կազմը, նրանց կողմից հայտնվող տեղեկատվության նշանակությունը գործի համար (որակական բովանդակությունը), ինչպես նաև էական նշանակություն ունեցող և կոնկրետ գործի բնույթից բխող այլ հանգամանքներ:

Քացի այդ՝ ներկայացված բողոքի, վարույթն իրականացնող մարմնի ներկայացված նյութերի ուսումնասիրման ընթացքում դատավարության մասնակիցներին հարցեր ուղղելու անհրաժեշտության դեպքում պետք է երաշխավորված լինի նաև դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ (*proprio motu*) բանավոր ընթացակարգի անցում կատարելու հնարավորությունը: Այլ կերպ՝ բանավոր ընթացակարգի կիրառումը պետք է լինի դատարանի դիսպոզիտիվ (տնօրինչական) լիազորությունը, որը կարող է կենսագործվել մինչդատական վարույթի նկատմամբ ինչպես նախնական, այնպես էլ հետագա դատական վերահսկողություն իրականացնելիս: Մակայն, նշված կանոնից բացառություն պետք է համարվեն «Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված՝ համապատասխանաբար կյանքի իրավունքի և խոշտանգումների արգելքի ենթադրյալ խախտումների կապակցությամբ արդյունավետ քննություն չիրականացնելու դեմ ուղղված բողոքները, որոնք, ելնելով այդ իրավունքների բնույթից, պետք է քննության առնվեն միայն բանավոր ընթացակարգով:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը կարծում ենք, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության բանավոր ընթացակարգից հստակ երաշխիքների ամրագրմամբ գրավորին անցում կատարելու դեպքում էականորեն կարող են տնտեսվել դատարանի կողմից վատնվող ռեսուրսները: Ուստի, կարծում ենք, որ նպատակահարմար կլինի մինչդատական վարույթի նկատմամբ գրավոր ընթացակարգով դատական վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը ներդնել նաև նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, որը նշված վարույթով պարտադիր է համարում բանավոր դատալսումների անցկացումը:

¹ Ներկայացված տվյալներն՝ ըստ court.am կայքի:
² Տե՛ս Hesse-Anger v. Germany գործով 2003 թվականի փետրվարի 6-ի վճիռը, զանգատ թիվ 45835/99:
³ Տե՛ս Miller v. Sweden գործով 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, զանգատ թիվ 55853/00, 29-րդ կետ, Martinie v. France գործով 2006 թվականի ապրիլի 12-ի վճիռը, զանգատ թիվ 58675/00, 41-րդ կետ:
⁴ Տե՛ս Dory v. Sweden գործով 2002 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, զանգատ թիվ 28394/95, 37-րդ կետ, Saccoccia v. Austria գործով 2008 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, զանգատ թիվ 69917/01, 73-րդ կետ:
⁵ Տե՛ս Allan Jacobsson v. Sweden գործով 1998 թվականի փետրվարի 19-ի վճիռը, զանգատ թիվ 8/1997/792/993, 49-րդ կետ, Valova, Slezak and Slezak v. Slovakia գործով 2004

թվականի հունիսի 1-ի վճիռը, զանգատ թիվ 44925/98, 65-68-րդ կետեր:
⁶ Տե՛ս Varela Assalino v. Portugal գործով 2002 թվականի ապրիլի 25-ի որոշումը, զանգատ թիվ 64336/01, Speil v. Austria գործով 2002 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը, զանգատ թիվ 42057/98:
⁷ Տե՛ս Miller v. Sweden գործով 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, զանգատ թիվ 55853/00, 34-րդ կետ:
⁸ Տե՛ս Goc v. Terkey գործով 2002 թվականի հուլիսի 11-ի վճիռը, զանգատ թիվ 36590/97, 51-րդ կետ:
⁹ Տե՛ս Jussila v. Finland գործով 2006 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, զանգատ թիվ 73053/01 40-րդ կետ:
¹⁰ Տե՛ս Hermi v. Italy գործով 2006 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, զանգատ թիվ 18114/02, 59-րդ կետ:



¹¹ St' u Suhadolc v. Slovenia գործով 2011 թվականի մայիսի 17-ի որոշումը, զանգատ թիվ 57655/08:

¹² St' u Kress v. France գործով 2001 թվականի հունիսի 7-ի վճիռը, զանգատ թիվ 39594/98, 74-րդ կետ:

¹³ St' u James Landman, You should have the body: Understanding Habeas corpus, Social education 72(2), 2008, pages 99-105:

¹⁴ St' u Ladent v. Poland գործով 2008 թվականի մարտի 18-ի վճիռը, զանգատ թիվ 11036/03, 72-րդ կետը:

¹⁵ St' u Курнышева Е.А., Ильин И.В., Теоретические аспекты принципа состязательности, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2017, N 1, էջ 130-134:

¹⁶ St' u Васильева Т.Ю., Состязательность как способ установления объективной истины // Российский судья, 2016, N 3, էջ 63:

¹⁷ St' u Ульянов В.Г., Государственное обвинение в Российском уголовном судопроизводстве (процессуальные и криминалистические аспекты), Краснодар, 2002, էջ 16.

¹⁸ St' u Галоганов Е.А., Проблемы реализации принципа состязательности в уголовном судопроизводстве Российской Федерации, Москва, 2008:

¹⁹ St' u Лучинский П.А., Уголовно-процессу-

альное право Российской Федерации, 2001, Москва, էջ 150:

²⁰ St' u Шумилова Л.Ф., Принципы состязательности и объективной истины как фундаментальные начала правоприменительной практики // Журнал российского права, 2005, N 11, էջ 55:

²¹ St' u Միրվարդ Գևորգյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԼԳ/0018/11/16 որոշման 17-րդ կետը:

²² St' u Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՐԱԳ/0001/11/14 որոշման 18-րդ կետը:

²³ Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասը նշում է, որ դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի շներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն ելնելով այն հանգամանքից, որ անց է կացվում հրապարակային դատաքննություն, պրակտիկայում դատական նիստերը պարբերաբար հետաձգվում են բողոք բերած անձի լաված լինելու իրավունքն ապահովելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հրաժարվում է իր այդ իրավունքից:

RESUME - РЕЗЮМЕ

COURT SUPERVISION OVER PRETRIAL PROCEEDINGS IN A WRITING FORM AS A MEASURE TO DECREASE AN OVER LOADED WORK OF FIRST INSTANCE COURTS

Arnold Vardanyan

*Judge's senior assistant at the Cassation court of the RA
PhD student at the YSU Chair of criminal procedure and
criminalistics*

In the submitted article, the author discusses the possibility of using a writing form as a measure to decrease an over loaded work of first instance courts. The idea of writing proceedings is being presented by the author both from the perspective of legal norms as defined by the legislator and the perspective of approaches adopted in law enforcement practice. The author's remarks about the writing proceedings based on the legal position of the European court of human rights.

The author has a strong belief that a writing form may become an effective measure to diminish difficulties related with the over loaded work of first instance courts.

Keywords: *writing proceedings, court supervision over trial, right of public hearings.*

СУДЕБНЫЙ КОНТРОЛЬ ЗА ДОСУДЕБНЫМ ПРОИЗВОДСТВОМ В ПИСЬМЕННОЙ ФОРМЕ КАК МЕРА СНИЖЕНИЯ ЗАГРУЖЕННОСТИ СУДОВ ПЕРВОЙ ИНСТАНЦИИ

Арнольд Варданян

*Старший помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики
Ереванского государственного университета*

В представленной статье рассматриваются основные вопросы использования письменной формы как меры для снижения загруженности работы судов первой инстанции. Идея письменных разбирательств представлена автором как с точки зрения правовых норм, установленных законодателем, так и с точки зрения подходов, принятых в правоприменительной практике. Выводы автора о письменном производстве основаны на правовых позициях Европейского суда по правам человека.

По убеждению автора, письменная форма может стать эффективным средством для снижения загруженности судов первой инстанции.

Ключевые слова: *письменная форма, судебный контроль за досудебным производством, право на публичное разбирательство.*

Բանալի բառեր - *գրավոր ընթացակարգ, մինչդատարանական վարույթի նկատմամբ դատարանական վերահսկողություն, բանավոր դատարարությունների իրավունք*